

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2021-10-8-Ա

ք. Երևան

11.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 11-ի նիստում քննարկեց 2021 թվականի հոկտեմբերի 13-ին լիազորված անձ Թամարա Տիտիզյանի կողմից ներկայացված՝ Արմեն Եսոյանի անունով (Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Յ. Լեփսիուսի 2, բն. 21, AM) «ՂԱՈՒՐՄԱ KAYPMA GHURMA» (№20210698) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «ՂԱՈՒՐՄԱ» բառից և դրա կյուրեղատառ և լատինատառ գրված «KAYPMA» և «GHURMA» տառադարձություններից, որտեղ «ղաուրմա»-ն տնայնագործական եղանակով պահածոյացված միսն է, ուստի խնդրարկված 29-րդ դասի՝ «միս. որսամիս. աղը դրած միս. պահածոյացված միս. մսի պահածոներ. սառեցումով չորացրած միս» ապրանքների համար հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով ապրանքի տեսակը, իսկ 29-րդ դասի մնացած բոլոր ապրանքների համար սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և տեսակի

վերաբերյալ հարցերում: Օրենքի 11-րդ, 13-րդ հոդվածների համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես ապրանքային նշաններ և բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված փաստարկներին առ այն, որ «...ՂԱՌԻՐՄԱՆ-ն Վրաստանի Հանրապետության Ջավախքի շրջանի գյուղերից մեկի անվանումն է» և «Գործակալության կողմից գրանցված են մի քանի ապրանքային նշաններ, որոնք բաղկացած են բացառապես մեկ տարրերից: Դրանցից են օրինակ՝ «ԿԱՑԻՆ» /հայտի համար՝ 20191559, Հայտատու՝ «Սիմփլ դիլ» ՍՊԸ, Երևան, Հովսեփ Էմին 3ա/, «ՇԵՐԵՓ ШЕРЕП SHEREP» /հայտի համար՝ 20161607, Հայտատու՝ «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ, Եր. Քոչարի 27/25/», ապա տեղեկացնում ենք, որ «դաուրմա»-ն հայ սպառողի համար տնայնագործական եղանակով պահածոյացված միսն է: Ապրանքային նշանը գրանցման է ներկայացվել հայ արտադրողի կողմից և Հայաստանի Հանրապետության տարածքում, ուստի այն զուգորդվելու է միայն տվյալ սննդամթերքի և ոչ վրացական որևէ մի տարածքի հետ: Ինչպես նաև անդրադառնալով Ձեր կողմից որպես օրինակ բերված ապրանքային նշաններին, ապա հարկ ենք համարում նշել, որ գրանցված ապրանքային նշանների «ԿԱՑԻՆ» և «ՇԵՐԵՓ» բառային տարրերը հայտարկված ծառայությունների համար չեն հանդիսանում նկարագրական բնույթի տարրեր և խոսքը չի վերաբերում զուտ մեկ տարրից բաղկացած ապրանքային նշաններին, խոսքը վերաբերում է նրան, որ հայտարկված ապրանքային նշանի բառային տարրը նկարագրական բնույթի տարր է, քանի որ հանդիսանում է ուտեստի տեսակ, որը լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում:

Կուլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ

ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «ՂԱՈՒՐՄԱ» բառից և դրա կյուրեղատառ և լատինատառ գրված «КАУРМА» և «GHURMA» տառադարձություններից, որտեղ «ղաուրմա»-ն տնայնագործական եղանակով պահածոյացված միսն է, ուստի խնդրարկված 29-րդ դասի՝ «միս. որսամիս. աղը դրած միս. պահածոյացված միս. մսի պահածոներ. սառեցումով չորացրած միս» ապրանքների համար հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով ապրանքի տեսակը, իսկ 29-րդ դասի մնացած բոլոր ապրանքների համար սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում:

Լիազորված անձը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել լիազորված անձ Թամարա Տիտիզյանի կողմից ներկայացված «ՂԱՈՒՐՄԱ КАУРМА GHURMA» (No20210698) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ